

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակության ողջ համակարգում հնագույններից է բարոյական դաստիարակությունը: Ըստ էության, երբ խնդիր առաջացավ դաստիարակել մատաղ սերնդին, այդ ժամանակից էլ բարոյական դաստիարակությունը դարձավ հրատապ և առաջնային: Պատահական չէ, որ բազմաթիվ գիտագեղարվեստական աշխատանքներում, հաճախ, «դաստիարակություն» հասկացության փոխարեն օգտագործել են «բարոյական դաստիարակությունը», որի համակարգում էլ ընկալվել են դաստիարակության բազմաթիվ այլ՝ բոլորովին վերջերս առանձնացված խնդիրներ: Բարոյական դաստիարակության մասին խոսելուց առաջ, հարկ է անդրադառնալ դաստիարակության ծագման, էության ու զարգացման՝, թերևս, մանկավարժագիտության նաև մյուս հասարակական գիտությունների կարևորագույն խնդիրներին, որոնք, անշուշտ, կախված են մարդու ծագման գիտական վարկածների հետ: որոնք ըստ ժամանակակից զարգացման անցել են երկու փուլ.

ա) 1.5 մլն.-300-400 հազար տարի առաջ՝ արխանտրոպային փուլ,

բ) 300-200 հազար -45-35 հազար տարի առաջ՝ պալեոլիթի (որսորդության և հավաքչության):

Յենց զարգացման երկրորդ փուլն է, որ բնորոշվում է զենքի ու քարե գործիքների զարգացմամբ ու դրանց տիրապետման ուսուցմամբ: Ի դեպ, Հայաստանում ևս, որպես մարդկության բնօրրան, մարդու կայացումը կապվում է պալեոլիթի դարաշրջանին¹:

Դաստիարակությունը, որպես կենսաբանական բարձրակարգ էակի գործունեության տեսակ, հիմնական դրդապատճառներ ունենալով սոցիալ-տնտեսական պահանջմունքները, զարգացել է մարդու կայացմանը զուգահեռ: Աշխատանքը և աշխատանքի ստեղծած արդյունքները փոխարինեցին որսորդությանն ու հավաքչությանը, իսկ որս անելու և հատապտուղ հավաքելու պարզագույն կարողությունները փոխարինվեցին աշխատանքային կարողություններով ու հմտություններով, որոնք հարկ է հաղորդել և փոխանցել:

¹ Սիմոնյան Յ. Ռ., Հայ մանկավարժության պատմություն, Ե., 1998թ., էջ 6

Փաստորեն, այդ գործընթացների բեռն ընկած էր դաստիարակության գործընթացի վրա, որը հանդիսանում է կենսաբանական էակի(մարդու) բնապատմական փորձի գիտակցված փոխանցում սերնդե սերունդ: Մարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերում, բացի ընդհանուր «բնական ընտրությունից», դաստիարակությունը, կախված հասարակության պահանջ-մունքներից՝ աշխատանքային, բարոյական, ֆիզիկական, գեղագիտական և այլն, իրականացնում էր ընթացիկ գոյաբանական խնդիրներ: Մաթեմատիկական մոդելավորման տեսանկյունից այսօրվա մարդն այնքան էլ չի հեռացել իր նախահորից. ընդամենը ավելացել են բնական ընտրության ձևերը, զարգացել մտածողությունը, շատացել միջոցները, թզենու տերևը փոխարինվել շքեղ ու հարմարավետ հագուստներով: Իհարկե, այս բոլորը կարող է պարզունակություն թվալ, սակայն խոսքը զուտ գծապատկերային տեսքի մասին է: Բովանդակային առումով՝ դաստիարակության գործընթացն ու նրա հիմնական օբյեկտը՝ մարդը, շատ ավելի բարդ են, հակասություններով լի: Եվ պատահական չէ դաստիարակություն բառի(հասկացության) ամենատարբեր ստուգաբանությունները տարբեր լեզուներով:

«Դաստիարակութիւն...իրահանգութիւն,ուսումնական խրատ...վարժել, կամ ուղղել դաստիարակութեամբ...», -գրված է հայկազյան բառարանում¹:

«Воспитание, вырастание, дав образование, обычаи, правила поведения, навыки поведения...»².

Մարդկային հասարակության մշակութային գանձարանում դաստիարակության գործընթացը հիմնականում ընկալվել է մարդասիրական նկատառումներով, թեև քիչ չեն դեպքերը, երբ համամարդկայնորեն մերժված որոշ գաղափարներ ու տեսություններ հաջողությամբ իրականացրել են իրենց նպատակային դաստիարակչական ներգործությունը:

Աստվածաշունչը, որպես մարդկության ամենահնագույն գրավոր ժառանգություն, նույնպես ուղղակիորեն է անդրադառնում դաստիարակության (բարոյական) խնդիրներին:

Անկախ դաստիարակության գործընթացի լայնածավալ ընդգրկման, այն նպատակային գործընթաց է, դեպի լավը վերափոխելու մարդուն կամ մարդկանց: Դեռևս, Ն.Ք. v-v դարերի մտածողները(Պլատոն) գտնում էին, որ ոչ մեկը պատահականորեն չի դառնում լավ մարդ, դրա համար անհրաժեշտ է

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ե., 1979թ., էջ 599

² Ожегов С. И., Словарь русского языка, М., 1984 г., стр. 85

նպատակային դաստիարակչական ներգործություն, որը, իբրև նպատակային գործընթաց, իր մեջ ամփոփում է նպատակի և բովանդակության, սկզբունքների, մեթոդների, ձևերի, միջոցների ու ստացված արդյունքների՝ ուղղակի և հակադարձ կապերի փոխակապվածություն: Ղաստիարակության գործընթացի վրա ազդում են բազմաթիվ՝ սոցիալական ու բնական միջավայր, ընտանիք, դպրոց, հասարակական հարաբերություններ ու արժեքներ, զարգվածային լրատվամիջոցներ և այլ գործոններ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Առաջինի՝ օբյեկտիվի թվին են պատկանում.

1. գենետիկական և առողջական վիճակը,
2. ընտանիքի սոցիալ- մասնագիտական կարգավիճակը,
3. երկրի և ժամանակաշրջանի առանձնահատկությունները,
4. կրթադաստիարակչական ինստիտուտների(համակարգի) մակարդակը և այլն:

Երկրորդ՝

1. դաստիարակների և դաստիարակվողների հոգեբանական, աշխարհայացքային, պահանջմունքային կողմնորոշումներն ու շահերը,
2. հասարակական հարաբերությունների ակտիվությունը,
3. մարդու և հասարակության (խմբեր, կոլեկտիվներ) փոխներգործությունը,
4. անձնավորության պատրաստակամությունը դաստիարակչական ներգործության նկատմամբ և այլն:

Ղաստիարակության գործընթացի ծագման ու պատմական զարգացման ընթացքում, բնականաբար, խնդիր առաջացավ ճշգրտելու մշտական զարգացման մեջ գտնվող դաստիարակության նպատակը, որի նախնական միտումը ֆիզիկապես ուժեղ և գազաններին ու թռչուններին սպանելու կարող սերնդի դաստիարակությունն էր, և կրում էր համընդհանուր բնույթ: Հետագայում ավելացան նպատակային նոր խնդիրներ, ի վերջո, դաստիարակության նպատակը հստակեցվեց բազմակողմանի և ներդաշնակ ձևավորված անձնավորության դաստիարակության ամբողջության մեջ:

Սոցիալ-մշակութային առումով՝ դաստիարակության նպատակը գիտակցված ու պլանավորված դաստիարակչական ներգործության միջոցներով ստացված արդյունքներ են: Սպասվող արդյունքները դրական են և ելնում են դաստիարակչական ներգործության մարդասիրական էությունից(բեն, ցավոք, հաճախ լինում է հակառակը): Այս առումով էլ խնդիր է առաջանում ճշգրտելու անձնավորության դաստիարակվածության մակարդակը: Գաղտնիք

չէ, որ հաճախ շփոթում են «դաստիարակվածություն» և «կրթվածություն» հասկացությունները:

Վերջինս ավելի շատ բովանդակում է անձնավորության գիտելիքների ու կարողությունների, ինչպես նաև ստացված կրթության լիակատարության մակարդակը, ուստի չի կարող բավարարել դաստիարակվածության բովանդակային մակարդակը: Մասնավորապես Վ. Ա. Սուխոմլինսկին գրում էր¹. «կրթված մարդկանց իսկական դաստիարակությունն ամենից առաջ մարդու, նրա հերոսական ոգու, հայրենիքին անսահման նվիրվածության, համոզմունքներին հավատարմության, հիսնուն մարդու երջանկության և մտքի բոլոր հարստություններին տիրապետելու պատրաստակամության և հմտության իմացությունն է»: Իհարկե, այստեղ մեծ մանկավարժը հիմնականում նկատի է ունեցել դաստիարակվածությունը, որը բովանդակում է հետևյալ որակների առկայությունը, բարությունը և հոգատարությունը շրջապատի նկատմամբ (մարդկանց, բնության, կենդանիների, հոգևոր արժեքների), ճշմարտագործությունը (խոսքի ու գործի), ազնվությունը (վարքի և գիտակցության), պատասխանատվությունը (գործի, մարդկանց, պարտականությունների), երախտագիտությունը (ծնողի, հարազատի, հայրենիքի նկատմամբ), նվիրվածությունը և այլն: Այս բոլոր որակները միաժամանակ բնութագրվում են որպես բարոյական դաստիարակության խնդիրներ, ուստի պատահական չէ, որ դաստիարակվածության մակարդակը բնութագրելիս օգտագործվում է «բարոյական է և առաքինի» բառակապակցությունը: Բարոյական դաստիարակությունն արտահայտում է դաստիարակության նպատակների ու բովանդակության ամբողջության կարևորագույն ուղղություններից մեկը:

Բարոյական դաստիարակության իրականացման չգերազանցված ոլորտ են դպրոցները և մյուս ուսումնական հաստատությունները, որպիսիք մատաղ սերնդի բարոյականային որակների ձևավորման նպատակով կազմակերպում էին դեռևս նախքան Զրիստոսի ծնունդը: Դրն հիմնական ագեյլաներն ու էֆեբիաները կարևորագույն տեղ էին հատկացնում բարոյական դաստիարակությանը: Դնագույն ժամանակներից մինչև մեր օրերը լույս տեսած գեղարվեստական ու մանկավարժական գրականության գերակշիռ մասը վերաբերում է բարոյական դաստիարակությանը: Եվ այսպես, դպրոցները, հնուց անտի, որպես բարոյական դաստիարակության իրականացման օջախներ են: Դ՞ կրթության օրենքը սահմանում է. «Կրթության բնագավառում պետական

¹ Վ. Ա. Սուխոմլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին, Ե., 1986թ., էջ 395

քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»¹։ Սիաժամանակ մշենք, որ հանրակրթական դպրոցի օրինակելի կանոնադրությունը ևս կարևորում է սերնդի բարոյական դաստիարակության խնդրի լուծումը. «11. Դպրոցը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում է անհատի բազմակողմանի զարգացումը...»²։ Ի դեպ, անցյալի հայկական դպրոցների կանոնադրություններում ևս կարևորվել է բարոյական որակների դաստիարակությունը։ Հարկ է մշել, որ բարոյական նորմերը, ինչպես և ողջ բարոյական դաստիարակությունը, ենթարկվել և ենթարկվում են լուրջ փոփոխությունների։ Այսպես, հունական ծագում ունեցող «դեմագոգ» բառը, որ անցյալում ունեցել է ճարտար և իմաստուն հռետորի, առաջնորդի ու խիզախ առաջավարի իմաստ, այժմ ընկալվում է բացասական. դատարկախոս, երեսպաշտ, շառլատան և սմանատիպ այլ մշանակություններով։ Բարոյական որակների (բարոյականության) փոփոխությունները տեղի են ունենում մի շարք գործոնների ազդեցությամբ.

- ❖ կրոնադավանաբանական,
- ❖ սոցիալ-քաղաքական ու պատմական,
- ❖ ազգային - էթնիկական,
- ❖ քաղաքակրթական և այլն։

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ բարոյական որակների համակարգում կատարվել են հասարակական տեղաշարժեր։ Ինչու՞ հասարակական, քանզի գիտամանկավարժական գրականության մեջ շարունակվում է դասակարգվել անցյալի պատճեններով։ Կարծես գիտական հետազոտություններն ու գիտական երաշխավորություններն ուշանում կամ ետ են մնում, իսկ հաճախ էլ՝ անիրաժեշտ գիտական նորությունները չեն ներդրվում։ Բարոյական դաստիարակությունը զուտ մանկավարժական խնդիր է, որի հոգաբանական մեխանիզմը թաքցված է անհատի զգացմունքային և գիտակցական մտածողության համակարգերի մեջ։

¹ ՀՀ Կրթության օրենքը, Ե., 1997թ., հոդված 4.2

² ՀՀ հանրակրթական դպրոցի օրինակելի կանոնադրություն(ՀՀ կառավարության 25.07.2002թ. թիվ 1392-Ն որոշում)

Բարոյական դաստիարակության տեսական հիմունքները կազմում են բարոյականության(եթիկա) համապատասխան որակները: Բարոյական դաստիարակության համակարգային խնդիրներն են.

- ❖ բարոյական գիտակցության ձևավորումը,
- ❖ բարոյական կարողությունների ձևավորումը,
- ❖ բարոյական վարքի և գործունեության ձևավորումը:

Բարոյականությունը, որպես բարոյական դաստիարակության գիտատեսական հիմք, հանդիսանում է հասարակական գիտակցության ձև և ավելի հին է, քան հասարակական գիտակցության մյուս ձևերը(կրոն, արվեստ, երաժշտություն և այլն): Բարոյականության տեխնոլոգիական հիմքերն են հասարակական կարծիքը, բարոյական համոզմունքները, զգացմունքներն ու սովորույթները: Առհեստի դեր ու նշանակություն ունի հասարակական կարծիքը: Ղրանք կարող են իրենց վրա կրել ավանդույթների բեռը, հաճախ էլ հանդիսանալ հասարակական հարաբերությունների կարգավորիչներ: Հասարակական կարծիքը կարգավորում է հասարակական հարաբերությունները, և, որ կարևոր է, ճշգրտում է անհատի և հասարակության հարաբերության հարցը: Հասարակական կարծիքի ուժը հատկապես հստակ է զգացվում դեռահասության շրջանում, երբ հաճախ դեռահասների համար ավելի կարևոր է ընդհանուր կարծիքը, քան՝ ուսուցիչների և ծնողների: Հարկ չկա գերազնահատել հասարակական կարծիքի դերն այսօրվա պայմաններում, սակայն գաղտնիք չէ, որ սովորողները շատ դեպքերում հասարակական կարծիքով են ճշգրտում իրենց տեղն ու դերը դպրոցում ու դասարանում, տանը և փողոցում, մեծերի ու իրենց հասակակիցների հարաբերություններում: Բարոյական մյուս քննաբաղադրիչը բարոյական համոզմունքներն են: Համոզմունքը երկարատև աշխատանքի (գործունեության) արդյունք է: Հիմքում ունենալով գիտելիքն ու բարոյականային որակները՝ համոզմունքի ձևավորումը պահանջում է երկարատև փորձաշրջան և մեծածավալ իմացական ու կամային աշխատանք: Համոզմունքները հաճախ աղերսվում են աշխարհայացքի հետ, որը պատահական չէ: Չէ՞ որ աշխարհայացքի հիմքը գիտելիքներն ու համոզմունքներն են: Համոզմունքները հավասարապես վերաբերում են անձնավորության անհատական- անձնային և սոցիալ- հասարակական գործունեության ոլորտներին: Սովորողների բարոյական համոզմունքների ձևավորման գործում կարևորվում է նաև ուսուցիչների (մանկավարժների) դերը, որոնց ղեկավարությամբ իրականացվում են գիտելիքների հաղորդումը, կարողությունների ու հմտությունների ձևավորումը: Նշանավոր մանկավարժ ու հոգեբան Գուրգեն Եղիսյանը նշում էր. «Ուսուցիչը ոչ

միայն ուսուցանող, այլև դաստիարակող է. նա կրթում է աշակերտի ֆիզիկականը, բարոյականը, մտավորը և զգացումները միաժամանակ. նա կրթում է ամբողջ մարդուն և ոչ միայն նրա մի մասը: Ուսուցչի անձնավորության առանձնահատկության նշանակությունը դաստիարակության ժամանակ ավելի զգալի է, քան ուսուցմանը»:

Զգացմունքները երեխաների բարոյականության փորձաքար են և նպաստում են նրանց բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ականատես ենք եղել հետաքրքիր երևույթի: Իմ ղեկավարած դպրոցի երկրորդ դասարանցիներին հանձնարարեցինք նկարների միջոցով պատմել իրենց ընտանիքների մասին: Երեխաներից մեկը նկարել էր ընտանիքի անդամներին միասին ճաշելիս, մյուսը՝ մորը՝ լվացք անելիս, փոքրիկ քույրիկին՝ քնած, եղբորը՝ հեռուստացույցի առջև, հորը՝ ընդհանուր տեսարանից դուրս՝ բաժնի ուսին, մի ուրիշն էլ նկարել էր փոքրիկ մահճակալ՝ մեկ բարձով, երկտեղանոց մահճակալ՝ մեկ բարձով, դատարկ սեղան՝ երկու աթոռով և այլն: Նկարներից արդեն իսկ պարզ էր յուրաքանչյուր երեխայի ընտանիքի կազմը, հարաբերությունները միմյանց հետ, և որ կարևոր է, տվյալ երեխայի վերաբերմունքը (զգացմունքի դրսևորման ձև) ընտանիքի յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Զգացմունքների դաստիարակությունն ունի նաև ճանաչողական արժեք: Խոսքը վերաբերում է ոչ միայն շրջապատն ու բնությունը ճանաչելուն, այլև հասարակական հարաբերություններին ու մարդկանց: Զգացմունքների դաստիարակությունն ուղղակիորեն կախված է դրանց ակտիվությունից ու արտահայտչաձևերից: Իսկ դրանք իրենց հերթին պայմանավորված են անհատական առանձնահատկություններով, ժառանգական գործոններով և այլն: Հարկ է նշել, որ զգացմունքները հանդիսանում են անձնավորության ներքին շարժիչ ուժեր և դրանք գտնվում են փոխկապակցվածության մեջ, զարգացնում, հարստացնում միմյանց: Սովորույթները բարոյականության մակարդակային և կայունացնող չափանիշներ ու հիմքեր են: Շատ դեպքերում սովորույթները ձեռք են բերվում բարոյական վարժությունների միջոցով: Դպրոցական համակարգում, հատկապես ժամանակակից պայմաններում, բավականին դժվարացել է դրական սովորույթների ձևավորումը: Դա պայմանավորված է արժեքային կոդմոորոշումների և սոցիալ-տնտեսական պայմանների անընդհատ փոփոխություններով: Սովորողը հաճախ ականատես է լինում, թե ինչպես է մինչ այդ բարձր գնահատվող որևէ երևույթ, գործիչ, դիրք (պաշտոն, կոչում, աստիճան) հանկարծակի մերժվում, ժխտվում կամ մոռացվում: Բնականաբար այս երևույթը խիստ բացասաբար է

անդրադառնում բարոյական որակների ձևավորման վրա: Բարոյականության առանձին որակների իմաստային փոփոխությունները և դրանց փոխկապակցվածությունն ու զարգացումը պայմանավորված է համակարգային հիմունքների ճշգրտման հետ: Ըստ այդմ էլ բարոյականության համակարգային հիմունքները կարելի է խմբավորել.

- ❖ անձնային-անհատական որակներ,
- ❖ հասարակայնորեն արժեքավորված(առաջարկված) որակներ,
- ❖ վարքային բարոյական որակներ(կարողություններ),
- ❖ ավանդույթասովորույթային որակներ:

Այս խմբերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է առանձին բաղադրամասերի, որոնք անկախ առանձնակի մոտեցման, խիստ փոխկապակցված են և պայմանավորված միմյանց գոյությամբ, որոնցից յուրաքանչյուրը առանձին քննության առարկա է:

Բարոյական որակների փոփոխությունների ամենագգայուն ծայնափողները երեխաներն են, հատկապես սովորող երեխաները: Թվում է՝ սովորողներն ունեն հայեցողական կենսադիրքորոշում հասարակայնորեն արժեքավորված բարոյական որակների նկատմամբ: Իրականում նրանք ավելի ակտիվորեն են հարաբերվում արժեքավորված սկուզբունքայնությանը, ազնվությանը, արդարությանը, խիզախությանը, ճշմարտախոսությանը և այլն: Եվ այս՝ տեղեկատվական առումով դպրոցը վաղուց արդեն միակ տեղեկատվության աղբյուրը չէ: Ուստի սովորողները գիտելիքներ ու դաստիարակչական ներգործություն են ստանում ոչ միայն դպրոցում, այլև ուրիշ աղբյուրներից: Այսինքն, բազմաթիվ բարոյական որակներ սովորողները ձեռք են բերում ոչ կազմակերպված համակարգով՝ սեփական կենսափորձով: Այստեղ է, որ դաստիարակության մեջ վճռորոշ դեր է հատկացվում բարոյական դաստիարակությանը, երբ սովորողների բարոյական ընկալումները դառնում են վճռորոշ: Ի դեպ, այս խնդրի լուծման ուղղությամբ բավականին առաջընթաց է ապրել հատկաօտես չինական մանկավարժական միտքն ու համակարգը: Հիմքում ունենալով կոնֆուցիզմի հզոր ուսմունքը՝ չինական մանկավարժությունը (նաև ճապոնականն ու կորեականը), բարոյական դաստիարակությունը բաժանում է երկու գլխավոր ուղղության.

ա)ազգային-պետական որակներ

բ)անձնային-հասարակական որակներ:

Հետաքրքիրն այն է, որ առաջին ուղղությունը բնորոշում է պետական ազգային ռազմավարությունը և համարյա անփոփոխ է, իսկ երկրորդը՝ վերաբերվում է դաստիարակչական տեխնոլոգիաներին, որը զարգացող ու փոփոխական է:

Բարոյական որակների ճշգրիտ ընկալումը սովորողների կողմից կարևորագույն դաստիարակչական խնդիր է, որի լուծման ուղիներից մեկը բարոյագիտական զրույցների անցկացումն է: Բարոյագիտական զրույցները չպետք է կրեն քարոզչական բնույթ, զրույցների թեմաները պետք է ընտրվեն խնամքով, պատճառաբանված և նպատակային՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Անցյալի հայ մանկավարժական միտքը ևս խիստ կարևորություն է տվել սերնդի բարոյական որակների դաստիարակությանը:

Եզնիկ Կողբացին գրում է. «...եվ արդ՝ ինչպե՞ս ի հայտ կգար գործերի ընտրումը, եթե մարդը չունենար երկակի՝ ենթարկվելու և չենթարկվելու իրավունք: Ուրեմն պարզ է, որ մարդն ազատական եղավ՝ կատարելու բարին կամ ձգտելու դեպի չարը»:¹

ՀՀ Կրթության օրենքը ևս խիստ կարևորություն է տալիս մատաղ սերնդի բարոյական դաստիարակության խնդրին՝ այն համարելով լիարժեք կրթվածության պարտադիր խնդիր:²

Ի դեպ, բարոյական դաստիարակության առանձնակի կարևորությունը զգացվում է հատկապես նախազորակոչային երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգում: Սա բացատրվում է նրանով, որ հայրենասիրության դաստիարակությունը համարվում է բարոյական դաստիարակության կարևորագույն խնդիր մի կողմից, իսկ մյուս կողմից վաղվա զինվորը, հայրենիքի պաշտպանը պետք է ունենա կայուն բարոյականային որակներ:

¹Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1970թ., էջ 49

² ՀՀ օրենքը զինապարտության մասին, 16.09.1998թ., հոդված 8